ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2021 թվականի N 330-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 352-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի *«Ի. Հայրիյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ նշանակելու մասին»* N 352-Ա որոշման 1-ին կետի՝ ***«զորահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար»*** բառերը փոխարինել ***«տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ»*** բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի սեպտեմբերի 16
ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2020 թվականի N 352-Ա

Ի. ՀԱՅՐԻՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 13-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար ***Ինգա Վաչագանի Հայրիյանին*** նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձին՝ ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված պարտականությունների իրականացումը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի հունիսի 14-ի *«Գ. Առուստամյանին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ նշանակելու մասին»* N 143-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 17
ք. Հրազդան